Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24042

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 6-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1931 Թ. ՕԳՈՍՏՈՍ 10—13

ՀԱՄԽ 1931 ԵՐԵՎԱՆ

24042

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼ. 6806 (Բ)
ՊԱՏ. 4691 ՏԻՐ. 1000

ՀՀ Ազգային գրադարան
NL0196690

05 JAN 2010

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՀԱՄԿԽ-Ի 5-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(ՀԱՄԽ ի 6-րդ պլենումի բանաձևը ընկ. Խոջամիրյանի զեկուցման առթիվ)

Լսելով ընկ. ԽՈՋԱՄԻՐՅԱՆ-ի զեկուցումը ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի վորոշումների նշանաբանով Հայաստանի արհմիությունների փոքրացման և աշխատանքների վերակառուցման մասին, պլենումն արձանագրում է, վոր Համկոմկուսի 16-րդ համագումարից հետո Հայաստանի արհկազմակերպությունների կողմից ձեռք են բերված վորոշակի նվաճումները «յերեսնելոս դեպի արտադրություն» լոզունգի կիրառման և արդֆինպլանների կատարման ուղղությամբ: Արհմիությունները, վերակառուցելով իրենց աշխատանքները կարողացել են դյխավորել բանվորական մասսաների ակտիվությունը, կազմակերպելով նրանց ժողովրդական տնտեսության զարգացման կոնկրետ խնդիրների շուրջը: Հատկապես 5-րդ պլենումի վորոշումների կիրառման ուղղությամբ, վորոնք անհրաժեշտ եռապն են պրոֆաշխատանքի հետեվողական վերակառուցման համար: Ծավալվել ու ամրացվել են սոցմրցումն ու հարվածայնությունը, աճել, կոնկրետացել և բովանդակալից են դարձել կնքված սոցմրցման պայմանագրերը: Միությունների փոքրացման հետևանքով արհկազմակերպությունների աշխատանքները ավելի կոնկրետացել և մոտեցել են արտադրական նախնական միավորներին. ուժեղացել են չրջպրոֆխորհուրդների աշխատանքները, և արհմիութենական միջին ղեկավարների լուծարքի հիման վրա ղեկավար պրոֆ-ապարատը մոտիկացել է ստորին ղեկավարներին և այլն:

Դրա հետ զուգընթացաբար ՀԱՄԽ-ի 6-րդ պլենումը նշում է, վոր արհմիությունների փոքրացման և նրանց աշխատանքների արմատական վերակառուցման գործում տեղի ունեն մի շարք թերություններ, այն է՝

1. Առայժմ հիմնովին չեն ամրացված փոքրացման յենթարկված արհմիութենական միավորները վերից վար.

0. 5.09. 2013

2. Դեռ մի շարք արհմիութենական ողակներում ֆորմալ կերպով է արտահայտվել արհմիութենական վերակառուցման աշխատանքը և չի համապատասխանում ժողովրդական տնտեսության զարգացման արագ տեմպերին. դեռ հիմնովին չեն կիրառվում ու զլխավորում աշխատանքի սոցիալիստական նոր ձևերն ու մեթոդները պրոֆկազմակերպությունների գործնական աշխատանքներում:

3. Վոչ բավարար կերպով է մասսայականացվել ու վերամբշակման յենթարկել ՀԱՄԿՄ-ի 5-րդ պլենումի վորոշումները արհմիութենական լայն մասսաներում և այդպիսին արհկազմակերպության բոլոր ողակների առորյա աշխատանքների հիմքը չի հանդիսացել:

4. Դեռ մի շարք արհմիութենական ողակների կողմից հարկ յեղած ղեկավարումն ու զխավորումը բացակայում է հանդեպ աշխատավորական մասսայի արտորե աճող ակտիվության ու վոգեվորության և հարվածային շարժման, դեռ աշխատանքի ծանրության կենտրոնը չի փոխադրված արտադրական ատորին միավորները, բրիգադը, ցեխը, հանքը, հերթը, արտադրական խմբակը և այլն. չեն ոգտագործված բոլոր հնարավորությունները 5-ամյա պլանի կատարման և գերակատարման բնագավառում, դեռ բոլոր ողակներում չեն վերակառուցվել արտադրական խորհրդակցությունները և հարկ յեղած չափով արհմիութենական ակտիվը, հարվածային առաջավոր բանվորները չեն ներգրավվել արհմիութենական գործնական աշխատանքներում կամավոր պրոֆաշխատանքի սկզբունքով:

5. Զնայած վերջին շրջանում պրոֆտորին և շրջանային աշխատանքներին ամրացված են ավելի ձեռնհաս աշխատողներ, այնուամենայնիվ նրանց սիստեմատիկ փոփոխության յենթարկվելը մյուս կազմակերպությունների կողմից դեռ վերջնականապես չի ապահովել Շրջպրոֆխորհուրդների հիմնովին վերակառուցումը:

6. Միգամայն թույլ է արհկազմակերպությունների վորոշումներն իր ժամանակին կատարելու հսկողությունը և նրա նկատմամբ պատասխանատվության զգացմունքը:

7. Դեռ անբավարար կերպով է արտահայտվում Անդրկովկասյան Յերկրային վարչությունների կենդանի ղեկավարությունը հանդեպ նոր կազմակերպված միութենական միավորների:

Յելնելով վերոհիշյալից, ՀԱՄԿՄ-ի 6-րդ պլենումն առաջարկում է արհմիութենական բոլոր ողակներին՝

1. Ցուրաքանչյուր կենտրոնական վարչության կողմից վերանայել տվյալ միության ատորին ցանցի կառուցվածքը, ամրացնել այդ միավորների վերակառուցման աշխատանքը, վորի համար առաջարկել բոլոր կենտավարչություններին առանձին շրջաններին ամրացնելու համապատասխան թվով պրոֆ պատասխանատու աշխատողների:

2. Հանձնարարել ՀԱՄԿՄ-ի նախագահությանը մոտ ապագայում կազմակերպելու ինչպես Յերևանում, նույնպես և մի քանի քաղաքներում պրոֆակտիվի ու կամավոր հրահանգիչների կարճատև նպատակային կուրսեր. անբավարար համարելով կամավոր հրահանգիչների ոգտագործումը պրոֆգործնական աշխատանքներում, առաջարկել արհմիութենական բոլոր ողակներին անհապաղ գործնականում կիրառելու ՀԱՄԿՄ-ի նախագահության կողմից առաջադրված այն միջոցառումները, վորոնք վերաբերում են կամավոր պրոֆհրահանգիչների ավելի կանոնավոր ու սիստեմատիկ ոգտագործման:

3. Արձանագրելով ժողտնտեսության բնագավառներում նոր աշխատանքի անցնող աշխատավորական մասսայում տարվող կուլտ-դաստիարակչական աշխատանքի և նրանց միության շարքերն ընդունելու խնդրի միանգամայն անբավարար դրությունը, առաջարկել բոլոր ողակներին վերից վար կանոնավորելու կուլտ դաստիարակչական աշխատանքը աշխատավորական նոր կադրերի շրջանում և առանց վորևե ձգձգումների միության շարքերն ընդունելու հիշյալներին:

4. Մինչև սեպտեմբերի 1-ը բոլոր կենտավարչություններում կազմակերպել արտադրական սեկցիաներ և ՀԱՄԿՄ-ի վերջին վորոշման հիման վրա ճշտել ատորին միավորների կառուցվածքը (արտ. խորհրդակցություն, ցեխկոմ, հերթկոմ, արտ. խմբակի կազմակերպիչ և այլն):

5. Հանձնարարել ՀԱՄԿՄ-ի նախագահությանը և շրջպրոֆխորհուրդներին շարունակելու կենտրոնական վարչություններ չունեցող միավորների կենդանի ղեկավարություն ցույց տալու ուղղությամբ վերցրած դիծը, ել ավելի կոնկրետացնելով և ուժեղացնելով այդպիսին, ինչպես նաև հարց բարձրացնել Անդր. արհմիխորհի առաջ համապատասխան ցուցմունք տալու այդ ուղղությամբ Անդր. յերկրային վարչություններին:

6. Զնայած Հայկենտկոմի և Անդրյերկոմի վորոշումներին ու ՀԱՄԿՄ-ի նախագահության ձեռք առած միջոցներին, այնուամենայնիվ շարունակվում է շրջպրոֆխորհուրդների աշխատողների սիստեմատիկ ու յերկարատև մոբիլիզացիան տեղական կազմա-

կերպությունների կողմից, վորը խոշոր չափով աղդում է պրոֆաշխատանքների նորմալ ընթացքի վրա:

Հանձնարարել ՀԱՄԿ-ի նախագահությանը նորից այս խնդիրը փոխադրելու Կենտրոնական Կոմիտե, խնդրելով վերջին անդամ հրահանգելու շրջանային կուսկազմակերպություններին վերջ տալու այդ յերևույթին և մոբիլիզացիաներ կատարելու այն հաշվով, վորպեսզի այդպիսին ընթանա ի հաշիվ պրոֆաշխատանքներին ինքնահոսի մատնելուն:

7. Հավանություն տալ ՀԱՄԿ-ի նախագահության վորոշմանը պրոֆաշխատողների կադրերի վերանայման վերաբերյալ, կուրս վերցնելով պրոֆաշխատանքներում առաջ քաշելու թարմ ու ձեռնրհաս կադրերի. սրա հետ միասին հանձնարարել ՀԱՄԿ-ի նախագահությանը խստիվ հետևելու, վորպեսզի Կենտրոնական վարչություններն առանց ՀԱՄԿ-ի համաձայնության շրջանային աշխատողներին չփոխադրեն կենտրոնում աշխատելու. ինչպես նաև համապատասխան միջոցառումներ ձեռնարկել նոր ուժ կադրեր պատրաստելու ուղղությամբ:

8. Պլենումն արձանագրելով միասնական պրոֆբյուջեյի դրական խոշոր արդյունքները, միաժամանակ նշում է արհկազմակերպությունների աշխատանքներում դեռ տիրող անթույլատրելի դրությունը (անդամավճարները ժամանակին չդանձելը, հատկացումներն իր ժամանակին համապատասխան վերադաս մարմիններին չփոխադրելը, վերստուգումների բացակայումը և այլն) և առաջարկում է բոլոր կազմակերպություններին վերջ տալու այդ դրությանը և անհապաղ կատարելու ՀԱՄԿԿ-ի 5-րդ պլենումի վորոշումը ֆինանսական ռեֆորմի մասին:

9. Արձանագրել, վոր մամուլը չի զբաղվել պրոֆաշխատանքների վերակառուցման խնդիրների պարզաբանմամբ. հանձնարարել ՀԱՄԿ-ի նախագահությանը համապատասխան որգանների առաջ հարց հարուցել պրոֆաշխատանքների վերակառուցման հերթական հիմնական խնդիրները սիստեմատիկաբար մամուլում պարզաբանելու ուղղությամբ:

10. Պլենումը մատնանշում է, վոր կոոպերատիվ աշխատանքների վերակառուցման գործում արհկազմակերպությունների կողմից տարվել է անբավարար աշխատանք և առաջարկում է բոլոր կենտվարչություններին վճռական շրջադարձ առաջ բերելու իրենց աշխատանքներում կոոպ աշխատանքների վերակառուցման ուղղությամբ, այդպիսին հիմնական միջոցներից մեկը դարձնելով

ժողովրդական տնտեսության զարգացման 5-ամյա պլանների կատարման գործում:

11. Առաջարկել ՀԱՄԿ-ի կազմակերպչական սեկտորին ՀԱՄԿԿ-ի կողմից վերջին անդամ հաստատված պրոֆկուրսերի հիման վրա կարճ ժամանակամիջոցում կարգավորելու սահմանավորման խնդիրները:

12. Արձանագրելով ՀԱՄԿ-ի և կենտվարչությունների կենդանի դեկավարության անբավարար լինելը շրջպրոֆխորհուրդների հանդեպ, հանձնարարել ՀԱՄԿ-ի նախագահությանը և առանձին կենտվարչություններին յուրաքանչյուր շրջանային արհկազմակերպությանն ամրացնելու հատուկ պատասխանատու աշխատողներ այն հաշվով, վոր նրանք յուրաքանչյուր յեռամսյակում առնվազն 20 որ լինեն տեղերում գործնական ոժանդակություն ցույց տալու նպատակով շրջպորֆմիավորներին:

13. Առաջարկել բոլոր պրոֆողակներին սահմանելու վորոշումների կատարման խիստ պատասխանատվություն և հսկողություն, առանձնացնելով այդ նպատակով հատուկ պատասխանատու անձնավորությունների:

ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(ՀԱՄԿ-ի 6-րդ պլենումի բանաձևը ժողցնտխորհի, Մասժողկոմատի յեվ ՀԱՄԿ-ի արտպլանային սեկտորի զեկուցումների առթիվ)

Ընդգծելով 1931 թ. 1-ին կիսամյակի արտադրանքի 31 տոկոսի աճումը համեմատած 30 թ. 1-ին կիսամյակի հետ, վորոշ նվաճումներ արտադրականության բարձրացման, տարբավորման ոգտագործման և այլ առպարեզներում, այնուամենայնիվ ՀԱՄԿ-ի Պլենումը արձանագրում է, վոր այդ նվաճումները միանգամայն անբավարար են համեմատած այն խնդիրների հետ, վորոնք դրված են 3-րդ վճռական տարվա առաջ: Պլենումն արձանագրում է, վոր 1-ին կիսամյակի 30·200·000 ռ. արտադրանք տալու փոխարեն Հայաստանի ժողովրդական տնտեսությունը տվել է 24 միլ. 700·000 ռ. արտադրանք, կամ կիսամյակի պլանը կատարվել է 81,8 տոկոսով. այսպիսով արդյունաբերական ձեռնարկները մեր յերկրին 5 և կես միլ. ռուբլու արտադրանք պակաս են տվել. Աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանը կատարվել է 88 տոկոսով, այսինքն՝ մի բանվոր 498 ռ. 80 կ. արտադրանքի փոխարեն փաստորեն տվել է 639 ռ. 10 կ. արտադրանք. ինքնարժեքը 15,7 տոկ. իջեցնելու փոխարեն ձեռնարկություններ կան, վորոնք իջեցրել են 2,6 տոկոսով, իսկ կան ձեռնարկություններ, վորոնք վոչ միայն ինքնարժեքը չեն իջեցրել, այլ ընդհակառակը բարձրացրել են (Լեռչինարդ, Կաշվարդ և այլն):

Հատկապես ընդգծել Լենտեքստիլի պլանի անբավարար կատարում (96,4 տոկ.), կարբիտ 84 տոկ., պղինձ 56,8 տոկ.:

Արձանագրել, վոր արդյունաբերությունը բոլոր հնարավոր միջոցներն ունի պլանները կատարելու և դերակատարելու համար, վորին ապացույց կարող են հանդիսանալ ճեղքված քների վերացման միամսյակի աշխատանքները: Հարվածային միամսյակում (հունիս) արտադրությունը համեմատած մայիսի հետ աճել է 21,6 տոկոսով, արտադրողականությունը բարձրացել է 17 տոկոսով:

Պլանների թերակատարման հիմնական պատճառները հանդիսանում են հետևյալները՝

ա) Հատուկ յեռամսյակում ձեռք բերված նվաճումներից հետո առաջացավ հանդստացուցիչ տրամադրություն ադմինիստրատիվ, տեխնիկական ու պրոֆաշխատակիցների մեջ, տնտեսական ու պրոֆկազմակերպությունները չկարողացան թերակատարման առաջին իսկ որերին մոբիլիզացիայի յենթարկել վոչ մասսաների ուշադրությունը պլանների թերակատարման դեմ պայքար կազմակերպելու համար:

բ) Արդյունաբերության ղեկավարման սոցարբիզում հայտնաբերվեց ոպորտունիստական ինքնահոս դիմադրություն. կասկածի տակ առնելով պլանների ռեալ լինելը, վոր և ժամանակին հակահարված տրվեց Կենտկոմի կողմից (Ալլահվերդի, Լենտեքստիլի առանձին ոդակներ):

Մինչև այժմ վերջնականապես չեն վերակառուցվել ադմինիստրատիվ ու պրոֆկազմակերպությունների աշխատանքները, վորոշ տեղերում ադմինիստրատիվ ապարատը դուրկ է սոցիալիստական վերելքի տեմպի համապատասխան ճկունությունից. վորոշ տեղերում պրոֆաշխատանքները դեռևս վերակառուցվել են ձևականորեն:

դ) Արձանագրելով, վոր 3-րդ վճռական տարվա պլանները կազմված են միանգամայն ռեալ, ամենաանողոք պայքարը մղել ոպորտունիստական տրամադրությունների և պրակտիկայի դեմ, վճռական խնդիր դնել 2-րդ կիսամյակում ապահովել պլանների կատարումն ու դերակատարումը, դերակատարման միջոցով ապահովել 1-ին կիսամյակի 5 և կես միլ. ճեղքվածքի վերացումը, 3-րդ յեռամսյակը հայտարարելով հարվածային, ապահովելով բանվորական լայն մասսայի վորոշումների կենսագործումը, Հայաստանի խորհրդայնացման 11-րդ տարեդարձին՝ Նոյեմբերի 29-ին ավարտելով 3-րդ վճռական տարվա պլանների կատարումը:

յե) Պլանների կատարումն ու դերակատարումն ապահովելու համար հիմնականորեն վերակառուցել աշխատանքները, ապահովել յեռանկյունու գործնական մասնակցությունը ցեխերի, ագրեգատների պլանների կատարման գործում, աշխատանքները վերակառուցելով ընկ. Ստալինի տնտեսավարների խորհրդակցությունում տված առաջարկությունների հիման վրա:

1. Պլենումն արձանագրելով ժողտնտխորհի միանգամայն անբավարար հսկողությունն ու ղեկավարությունը ֆեդերատիվ ու միութենական նշանակություն ունեցող ձեռնարկությունների նկատմամբ, ինչպես նաև առանձին գերատեսչությունների միանգամայն անբավարար ղեկավարությունը, հանձնարարում է՝

ա) Ժողտնտխորհին՝ ուժեղացնել իր հսկողությունն ու ղեկավարությունը ֆեդերատիվ-միութենական նշանակություն ունեցող ձեռնարկությունների վրա, վորով Հայաստանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են կազմում (Գզինձ, Արթիկ տուֆ, Տեքստիլ և այլն):

բ) Պլենումն անհրաժեշտ է գտնում ՀԱՄԽ-ի միջոցով միութենական ու ֆեդերատիվ նշանակություն ունեցող ձեռնարկությունների ղեկավարման ու հսկողության խնդիրները, ինչպես նաև Հայաստանի Ժողտնտխորհի, Անդրժողտնտխորհի ու առանձին տրեստների փոխհարաբերության խնդիրը տեղափոխել Անդրպրոֆխորհուրդ, պարզելու հանրապետական Ժողտնտխորհների մասնակցության ու ղեկավարության միջոցները միութենական ու ֆեդերատիվ նշանակություն ունեցող ձեռնարկությունների ղեկավարման գործում: Միաժամանակ արձանագրել Անդրկովկասյան ձեռնարկների միանգամայն անբավարար ղեկավարությունն ու հսկողությունը:

գ) Հանձնարարել Մատժողկոմատին կտրուկ միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու հսկողությունն ու կոնկրետ ղեկավարությունը իրեն յենթակա առաձին ձեռնարկությունների նկատմամբ:

դ) Հանձնարարել իրեն յենթակա արտադրական ձեռնարկությունների նկատմամբ ուժեղացնել անմիջական ղեկավարությունը:

2. Արձանագրելով պղնձի խոշոր նշանակությունը մեր սոցշինարարության ու ինդուստրացման համար, ինչպես նաև այն, վոր տնտեսական մարմիններն ու պրոֆկազմակերպությունները վճռական միջոցներ ձեռք չեն առել ապահովելու Անդրյերկոմի վորոշումը 6000 տոննն պղնձի արտադրման մասին, հանձնարարել Անդրպղինձկոմբինատին և Ալլահվերդու ու Ղալանի շրջպրոֆխորհրդներին ձեռք առնել ամենակտրուկ միջոցները, մոբիլիզացիայի յենթարկել վողջ մասսաների ուշադրությունը, վերակառուցել աշխատանքները, ծավալել հետախուզական աշխատանքները, արագացնել բնակարանային շինարարությունը և այս բոլորի միջոցով ապահովել 6000 տոննն պղնձի արտադրությունը:

3. Պլանների կատարման ու գերակատարման հիմնական նախապայմաններից մեկը համարելով տեխնիկային տիրապետելու խնդիրը, հանձնարարել ՀԱՄԽ-ի մասսաներին և ՃՏՄԲ-ին Ժողտնտխորհի ու Մատժողկոմատի հետ միասին մշակել բարձր,

միջին և ստորին պերսոնալի համար տեխնիկական խմբակներ կազմակերպելու կոնկրետ պլան, յենթարկելով տվյալ արտադրության բնույթից: Ամշակներում 1-ին հերթին ներգրավել հարվածային բանվորներին: Միաժամանակ միջոցներ ձեռք առնել ամրացնելու գոյություն ունեցող խմբակների աշխատանքները:

4. Պլանի կատարման ու գերակատարման հիմնական նախապայմաններից մեկը համարելով բանուժի պլանային մատակարարումը, մասնավորապես շինարարության համար, ՀԱՄԽ-ի պլենումը գտնում է անհրաժեշտ՝

ա) Հանձնարարել Աշխժողկոմատին, Պետպլանին և ՀԱՄԽ-ի կադրերի սեկտորին ամենակարճ ժամանակամիջոցում անցնել բանուժի հաշվառման, ըստ առանձին շրջանների ու դյուղերի կազմել բանուժի բալանսը, առաջին խնդիրը համարելով բանուժի ավելցուկի հայտնաբերումը. միաժամանակ արձանագրել, վոր մինչ այժմ բանուժի վերբովկայի խնդրում Աշխժողկոմատի ամենաբյուր հսկողությունը յեղել է անբավարար:

բ) Հանձնարարել Աշխժողկոմատին բանուժի բալանս կազմելու հետ միասին կատարել շրջանների վերաբաշխում ըստ առանձին զերատեսչությունների, յենթարկելով տվյալ զերատեսչության բանուժի պահանջից: Միաժամանակ ապահովել ամենաբյուր հսկողությունը բանուժի վերբովկան հաջող անցկացնելու համար:

գ) Հանձնարարել շրջպրոֆխորհուրդներին ապահովել գործնական մասնակցությունը շրջաններում բանուժի վերբովկա անցկացնելու խնդրում: Միաժամանակ միջոցներ ձեռք առնել ապահովելու կառավարության վերջին դեկրետի (Արտագնացների մասին) մասսայականացումը կոլտնտեսություններում ու դյուղսովետների մեջ:

դ) Հանձնարարել շրջպրոֆխորհուրդներին, Կոլխոզկենտրոնին և ՀԱՄԽ-ի կադրերի սեկտորին հաշվի առնել յուրաքանչյուր կոլեկտիվում բանուժի ռացիոնալ օգտագործման խնդիրը, մաքսիմալ չափով ազատագործելով կանանց ուժը կոլտնտեսությունում, տղամարդու ուժը արդյունաբերության ու շինարարության տրամադրելու նպատակով:

ե) Հանձնարարել Կոլտնտեսկենտրոնին մեքենամատակարարման ժամանակ 1-ին հերթին մատակարարել այն կոլտնտեսություններին, վորոնք պլանավորված ձևով բանուժ են տրամադրել արդյունաբերությանն ու շինարարությանը:

զ) Հանձնարարել Կոլտնտեսկենտրոնին յուրաքանչյուր կոլխոզի

պլանը կազմելու ժամանակ հաշվի առնել ազատ բանվորական ուժը:

ե) Հանձնարարել տնտմարմիններին ապահովել կոլխոզների հետ կնքվելիք պայմանագրերը, միջոցներ ձեռք առնել պլանավորված ձևով արդյունաբերությունը և շինարարությունը ապահովելու բանուժով:

5. Արձանագրել, որ բանուժի հոսունության գլխավոր պատճառներից մեկը հանդիսանում է աշխատավարձի ու գործարքային աշխատանքի սխալ դասավորումը, աշխատավարձի հավասարեցման քաղաքականության տենդենցները և այլն, որի համար պլենումը հանձնարարում է՝

ա) Բոլոր կ. վարչություններին, ՀԱՄԽ-ի արտադրանային սեկտորին ու տնտ. օրգաններին արագացնել տարիֆ տեղեկատուների վերանայման աշխատանքները, այն հաշվով, որ մինչև օգոստոսի 15-ը հիմնականում ավարտվեն աշխատանքները, միաժամանակ արձանագրել, որ մինչ այժմ Մատժողկոմատի և Ժողկոմխորհի կողմից վերցված տեմպը յերբեք չի ապահովում նախատեսված ժամանակին աշխատանքներն ավարտելը:

բ) Տարիֆ տեղեկատուների վերանայման աշխատանքներին ապահովել հարվածային բանվորների և մասնագետների մասնակցություն, տալ յուրաքանչյուր աշխատանքի ճիշտ բնութագիրը, ապահովել որակյալ ու անորակ բանվորների աշխատավարձի զգալի տարբերությունը:

գ) Հանձնարարել արտադրանային սեկտորին 20-օրյա ընթացքում տնտ. օրգանների հետ միասին միջոցներ ձեռք առնել արտադրական բանվորների հիմնական մասին անցկացնելու գործարքային աշխատանքի, ապահովելով Կենտկոմի 4-րդ պլենումի վորոշումը մինչև սեպտեմբ. 1-ը հիմնական բանվորների 80 տոկոսը գործարքային աշխատանքի անցկացնելու մասին, միաժամանակ արագացնել նորմաների մշակման աշխատանքները:

դ) Հանձնարարել արտադրանային սեկտորին մեկ ամսվա ընթացքում տնտ. օրգանների հետ միասին հաշվի առնել մինչ այժմ գոյություն ունեցող աշխատավարձի հավասարեցման քաղաքականությունը և միջոցներ ձեռք առնել վերացնելու այդպիսին, ստեղծելով շահագրգռիչ պայմաններ բանվորների համար ավելի բարձր որակի անցնելու:

ե) Հանձնարարել Ժողկոմխորհին և Մատժողկոմատին բոլոր ձեռնարկություններում (ֆեդերատիվ-միութենական ու տեղական նշանակություն ունեցող) ուժեղացնել տարիֆ նորմավորման աշխատանքները, իսկ այնտեղ, որտեղ գոյություն չունի կազմակերպել այդպիսին, ժամկետ ընդունելով մեկ ամիս:

զ) Հանձնարարել Ժողկոմխորհին արագացնել կենտկոմի պլենումի վորոշման ու ՀԱՄԽ-ի նախագահության հունիս ամսվա վորոշման կենսագործումը նորմիրովշչիկների կուրսեր կազմակերպելու համար: Միաժամանակ հանձնարարել կադրերի սեկտորին ու կենտվարչություններին կուրսերն ապահովել հարվածային գրագետ բանվորներով:

ը) Աշխատավարձի պրոգրեսիվ պրեմիալ անհատական սիստեմին անցնելու ասպարեզում մինչև այժմ տնտեսավարների ու պրոֆմիությունների կողմից կտրուկ միջոցներ ձեռք չեն առնվել. նման դրությունը համարելով միանգամայն անթույլատրելի թերագնահատում պրոգրեսիվ պրեմիալ ձևի նկատմամբ, հանձնարարել արտադրանային սեկտորին այդ սիստեմը 1-ին հերթին անցկացնել Տեքստիլում, Ալլահվերդում, փայտամշակման և կաշի գործարաններում. առաջարկել հիշյալ գործարկումների տնտեսավարներին և պրոֆկազմակերպություններին ձեռք առնել կտրուկ միջոցներ օգոստոս ամսվա ընթացքում հիշյալ վորոշումը կենսագործելու համար: Միաժամանակ արձանագրել, որ Ժողկոմխորհն այս ուղղությամբ մինչև այժմ միջոցներ ձեռք չի առել:

թ) Հանձնարարել Աշխժողկոմատին արագացնելու պետչափավորման աշխատանքների ավարտումը. միաժամանակ հանձնարարել կենտվարչություններին և շրջպրոֆխորհուրդներին առնել նախապատրաստական աշխատանք պետչափավորումն անցկացնելու համար, պատրաստել պահանջված նյութերը համապատասխան տնտօրգանների մասնակցությամբ:

ժ) Արձանագրել, որ բանվոր ծառայողների ինքնամրացումը գործարաններին ու հիմնարկներին ընթանում է դանդաղ: Հանձնարարել կենտվարչություններին և մասսայական սեկտորին ձեռք առնել համապատասխան միջոցներ ապահովելու բանվոր-ծառայողների և ԻՏ աշխատավորների ինքնամրացումը հիմնարկ ձեռնարկություններում:

6. Արձանագրել, որ բանուժի հոսունության դեմ կռվելու համար խոշոր նշանակություն ունի բանմատակարարման ու բնակարանային նպաստավոր պայմաններ ստեղծելը, որի համար՝

ա) Հանձնարարել տնտ. մարմիններին, Բնակշինկոոպին և Հայպետշինին ձեռք առնել համապատասխան միջոցներ 31 թ. բնակշինարարության պլանների կատարումն ապահովելու համար:

բ) Հանձնարարել Ժողտնտխորհին և Մատժողկոմատին 32 թ. վերահսկիչ թվերով նախատեսել հատուկ գումար բնակարանային ու կենցաղային հիմնարկների շինարարության համար, միաժամանակ միջոցներ ձեռք առնել բնակարանային կոոպերատիվի մեջ ներգրավել բանվոր-ծառայողներն, ինժիներ-տեխնիկական աշխատողներին:

գ) Հանձնարարել սոցկենցաղային սեկտորին 20 որվա ընթացքում պարզել բնակ-շինարարության ֆոնդերի ոգտագործման դրությունը, միջոցներ ձեռք առնել նախատեսված ֆոնդն իր նպատակին ծառայեցնելու համար:

7. Գլենումն արձանագրում է, որ մինչև այժմ տնտ. մարմինների ու պրոֆկազմակերպությունների կողմից պահանջված աշխատանքը չի տարվել արտադրության աշխատանքի ճիշտ կազմակերպման համար, որի համար՝

ա) Հանձնարարել արտպլանային սեկտորին այն գործարաններում, որտեղ 7-ժամյա բանվորական որը և 3 հերթի աշխատանք է, անընդհատ հետևանքով առաջացած շրջիկ խմբերը լիկվիդացիայի յենթարկելու, սարքավորումը ռացիոնալ ոգտագործելու, մեքենաների լրիվ բեռնավորումը ապահովելու համար կազմակերպել համապատասխան տնտորդանների սոցբրիգադային ձևի աշխատանք, յելնելով միութենական գործարանների փորձից, առաջին հերթին աշխատանք սկսել Տեքստիլում, որի համար հանձնարարել տեքստիլի վարչությանն ու գործարկոմին այս ուղղությամբ տանել նախապատրաստական աշխատանք:

բ) Հաշվի առնելով այն, որ անցյալներում մի շարք ձեռնարկություններ անցել են անընդհատ շաբաթի առանց հաշվի առնելու թե տվյալ ձեռնարկությունում անընդհատ ինչ տնտեսական եֆեկտ կարող է տալ, առանց հաշվի առնելու բանվորական վարակյալ ուժի, հում նյութի և սարքավորման խնդիրը, հանձնարարել ՀԱՄԽ-ին, Աշխժողկոմատին և Ժողտնտխորհին անընդհատ անցած ձեռնարկություններում անցկացնել ստուգում և այն ձեռնարկություններում, որտեղ հետագոտումից հետո կպարզվի, որ անընդհատ շաբաթը առանձին տնտեսական եֆեկտ չի տալիս և այդ կհիմնավորվի, նման ձեռնարկություններում՝ միայն թույլ տալ անցնելու ընդհատ շաբաթի, խիստ պայքար մղելով ինքնահոսի ձևով ընդհատ շաբաթի անցնելու դեմ: Միաժամանակ հանձնարարել տնտորդաններին, Աշխժողկոմատին ու կենտվարչություններին հետագայում անընդհատ անցնող ձեռնարկություններում նախ քան անընդհատի անցելը տանել նախապատրաստական աշխատանք, պարզել բոլոր պայմանները, որից հետո միայն թույլ տալ անընդհատի անցնել:

8. Արձանագրելով սոցմրցման ու հարվածայնության ասպարեզում ձեռք բերված նվաճումները, այդպիսին գտնել դեռևս անբավարար. մասնավորապես սոցմրցման պայմանագրերի կոնկրետացման, տնտեսական եֆեկտի հաշվառման գործը գտնվում է միանգամայն անբավարար վիճակում. հանձնարարել ՀԱՄԽ-ին, ժողտնտխորհին և Մատժողկոմատին՝

ա) Մինչև սեպտեմբերի 1-ը բոլոր գործարաններում կանոնավորել սոցմրցման հաշվառման գործը, վերջնական ամփոփումը կենտրոնացնելով ՀԱՄԽ-ում:

բ) Մինչև սեպտեմբերի 1-ը կանոնավորել սոցմրցման և հարվածայնության տնտեսական եֆեկտի հաշվառումը:

գ) Ծավալել հարվածային բրիգադների կազմակերպումն ու պայմանագրերի կոնկրետացման աշխատանքը:

դ) Ուժեղացնել ընկերական-արտադրական դատարանների աշխատանքները, պայքարելով կեղծ հարվածայինների դեմ:

յե) Արտադրական կոմունաներում ու կոլեկտիվներում գոյություն ունեցող աշխատավարձի հավասարեցման քաղաքականությունը (մանարանի մանողների և սյոմչիկների աշխատավարձի հավասարեցման քաղաքականություն) գտնել «ձախ» պրակտիկայի արդյունք. հանձնարարել Լենքաղտրոֆխորհրդի նաև տեքստիլի գործարկոմին, կոմունաներում ու կոլեկտիվներում աշխատանքները վերակառուցել, կազմել տնտեսական հաշվառում, վարձատրությունը կատարելով ըստ վարակի, միաժամանակ փորձի փոխանակման նպատակով կապվել կենտրոնական գործարանների հետ:

9. Արձանագրել, որ տնտ. հաշվարկը, մասնավորապես ցեխերում և բրիգադներում ընթանում է միանգամայն անբավարար. տնահաշվարկի անցած ցեխերում չի կատարվում առանձին հաշվառում. վորոշ տեղերում ցեխային տնահաշվարկը անց է կացված ձևականորեն. (Կոնսերվ, մետաքս, Արթիկ-տուֆ և այլն): Մի շարք գործարաններում այդ ուղղությամբ անգամ նախապատրաստական աշխատանքներ չեն տարվում, յեռանկյունին համապատասխան միջոցներ ձեռք չի առել: Նման վերաբերմունքը համարելով միանգամայն ոպորտունիստական թերագնահատում տնտ. հաշվարկի նկատմամբ, համապատասխան կազմակերպությունների միջոցով ձեռք առնել հետևյալ միջոցները.

ա) Օգոստոս–սեպտեմբեր ամիսների ընթացքում խոշոր ձեռնարկություններում անցկացնել տնտ. հաշվարկի պայմանագրերի ստուգատես, նպատակ ունենալով պարզել պայմանագրերի վիճակը և պարտավորությունների կատարման աստիճանը:

բ) Հաշվապահական աշխատանքները միանգամայն հետ են մնում, որի հետևանքով ցեխային և բրիգադային տնտ. հաշվարկի անցնելը ձգձգվում է: Հանձնարարել ՀԱՄԽ–ի և տնտ. օրգաններին ձեռք առնել կտրուկ միջոցներ այն հաշվով, որ բոլոր ցեխերում մինչև սեպտեմբեր 1–ը տնտ. հաշվարկի անցումը ապահովվի:

գ) Միանգամայն անբավարար մասնակցություն են ցույց տվել գործարկոմ–տեղկոմները բրիգադային և ցեխային տնտ. հաշվարկի աշխատանքներին, հանձնարարել գործարկոմներին ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ նախատեսված ժամկետին աշխատանքներն ավարտելու համար:

10. Պլանի կատարման ու գերակատարման համար խոշոր նշանակություն ունի բանուժի ռացիոնալ օգտագործումը և ցեխային աշխատանքի ճիշտ դասավորումը: Հանձնարարել ՀԱՄԽ–ին ու տնտ. օրգաններին՝

ա) Բանուժի ռացիոնալ օգտագործման, մեքենաների լրիվ բեռնավորման արտադրության բարձրացման համար խոշոր նշանակություն ունի ռացիոնալ աշխատանքի կազմակերպումը. Հիմնական արտադրական ճյուղերում ռացիոնալ աշխատանքի անցնելու ուղղությամբ դեռևս անբավարար աշխատանք է կատարվում. որոշ քայլեր արվել են տեքստիլում, բայց գործը դանդաղ է ընթանում: Հանձնարարել տեքստիլի վարչությանն ու գործարկոմին արագացնել ֆունկցիոնալ աշխատանքի կազմակերպումը, որից հետո Տեքստիլի փորձը փոխադրել մյուս գործարանները, միաժամանակ մյուս գործարաններում այս ուղղությամբ տանել նախապատրաստական աշխատանք:

բ) Հանձնարարել տնտօրգաններին ապահովել տեխնիկական հսկողություն 2–րդ և 3–րդ հերթերի նկատմամբ, միաժամանակ կատարել բանուժի ճիշտ բաշխում ըստ առանձին հերթերի, ապահովելով արտխորհրդակցության մասնակցությունը այս աշխատանքներում:

գ) Մինչև այժմ պահանջված ուշադրությունը չի դարձվել արտադրական–որակական ցուցանիշների վրա. Հանձնարարել տնտօրգաններին գործարաններում ուժեղացնել տեխնիկական հսկողությունը. միաժամանակ գործարկոմների միջոցով ուժեղացնել պլան–ապրանքային խմբակների պայքարը որակական ցուցանիշների կատարման համար:

դ) Հանձնարարել տնտօրգաններին մինչև սեպտեմբերի 1–ը բոլոր գործարաններում կազմակերպել ռացբյուրոներ, վերջիններիս աշխատանքը դնելով իր բարձրության վրա, ապահովելով հարվածային բանվորների ակտիվ մասնակցությունը ռացիոնալացման աշխատանքներին. միաժամանակ տնտեսական օրգանների միջոցով ապահովել ռացիոնալացման գծով աշխատողների կադրերի պատրաստման գործը:

յե) Մինչև սեպտեմբերի 1–ը բոլոր ձեռնարկություններում կանոնավորել արտխորհրդակցությունների անհատ բանվորների և ՃՏՍ–ի անդամների կողմից յեղած առաջարկների կատարումն ու հաշվառումը, վերոհիշյալ որոշման կատարման ստուգումը հանձնարարել գործարկոմներին և մասսայական սեկտորին:

զ) Պարբերաբար կազմակերպել պայքար կորուստների դեմ, լրիվ չափով մոբիլիզացիայի յենթարկել ներքին միջոցները, ապահովելով լայն մասսաների մասնակցությունն այդ աշխատանքներին: Միաժամանակ արձանագրել, որ մինչև այժմ թույլ է ընթացել պրոֆմիությունների փորձնական աշխատանքը այդ ասպարեզում. հատուկ ուշադրություն դարձնել ապրանքների և նյութերի կրճատման գծով, որի համար հանձնարարել գործարկոմներին ուժեղացնել հսկողությունը այդ ասպարեզում, միաժամանակ ուժեղացնել ռեալիզացիայի գործը:

ը) Պրոֆմիություններին մինչև այժմ չի հաջողվել լրիվ չափով օգտագործել մասնագետներին և համապատասխան պայմաններ չեն ստեղծել լրիվ չափով հասարակական աշխատանքի քաշել ՃՏՍ–ի վողջ մասսային, հանձնարարել գործարկոմներին տեղի ՃՏՍ–ների անմիջական մասնակցությամբ ապահովել մասնագետների մասնակցությունը հասարակական, մասսայական–արտադրական խնդիրներին:

թ) Հանձնարարել Աշխատողկոմատին և Ժողտնտխորհին, 7 ժամյա բանվորական օրվա անցնելիք գործարաններում ապահովել նախատեսված ժամկետին անցնելը, միաժամանակ հանձնարարել գործարկոմներին և կենտվարչություններին այդ գործարաններում տանել նախապատրաստական աշխատանքներ:

ժ) Արձանագրել, որ գյուտարարության աշխատանքները, չնայած վերջին շրջանում աշխուժացել են, բայց աշխատանքները դեռևս պետք համարել անբավարար, որի համար հանձնարարել՝ Ժողտնտխորհին և Մատժողկոմատին բոլոր գործարաններում կազմակերպել գյուտարարական բյուրոներ, միաժամանակ

հանձնարարել գործարկոմներին ու կենտվարչություններին կազմակերպել գյուղատնտեսական բջիջներ և ապահովել մասսաների մասնակցությունն ու հսկողությունը գյուղատնտեսական աշխատանքներում:

11. Արձանագրել կապիտալ շինարարության, մասնավորապես գործարանային շինարարության, միանգամայն դանդաղ տեմպը (կարի, գրանիտի, ծխախոտի, փայտամշակման գործարաններում 1-ին կիսամյակում շինարարության պլանը կատարվել է 26,3 տոկոսով): Պլանների թերակատարման գլխավոր պատճառներից մեկը հանդիսանում է շինօրգաններում տիրող դիմազրկությունը. գտնել միանգամայն դատապարտելի վոր ձգձգվում է կենտկոմի մայիսի 14-ի վորոշման կատարումը շինարարության կենտրոնացման խնդրում: Միաժամանակ արձանագրել, վոր Ժողտնտխորհի կողմից կապիտալ շինարարության վրա հսկողությունը յեղել է թույլ, պլենումը հանձնարարում է՝

ա) Ժողտնտխորհին՝ արագացնել շինօրգանների կենտրոնացումը ամենաուշը մինչև սեպտեմբերի 1-ը:

բ) Հանձնարարել Հայպետշինին, Ղսերի վարչությանը, Զակպիշչեպրոմստրոյին, Զորագեսին, Ցեմշինին կտրուկ միջոցներ ձեռք առնել հարվածային շինարարությունները ավարտել նախատեսված ժամկետին. միաժամանակ արագացնել պատվերների ստացումը:

գ) Հանձնարարել կառուցողների կենտվարչությանը միջոցներ ձեռք առնել շին. բանվորների մեջ եվ ավելի ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը. միաժամանակ ապահովել բանվորների ամրացումը տվյալ շինարարության մեջ:

դ) Հանձնարարել կառուցողների կենտվարչությանը ու շինօրգաններին գնացուցակներում կատարված փոփոխությունները կենսագործել օգոստոս ամսվա ընթացքում, ապահովելով կատարված փոփոխությունների մասսայականացումը:

յե) Հանձնարարել Ժողտնտխորհին ուժեղացնել հետախուզական աշխատանքները շինանյութի արդյունաբերության գծով, ուժեղացնելով շինանյութի տրեստի անմիջական ղեկավարությունն այդ աշխատանքներում:

զ) Ժողտնտխորհի ղեկավարությունը Ֆեդերատիվ և միութենական նշանակություն ունեցող կապիտալ շինարարության գործում ապահովելու համար ուժեղացնել շինարարության խնդրով զբաղվող բաժնի աշխատանքները, ապահովելով կոնկրետ ղեկավարությունը:

է) Բանվորական ուժի հոսունությունը պետք է վերացնել նաև նրանով, վոր բացի կառուցողների արհմիություններից, մնացած միությունները, վորոնք սպասարկում են խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և շինարարության վրա զբաղված բանվորներին, մինչև 31 թ. գնացուցակները չեն մասսայականացել և չի կիրառել ու այդ աշխատանքները վարձատրվել են մթերքներով կամ չափազանց բարձր: Առաջարկել բոլոր ավխոդային միություններին և սելխոզստրոյին ամենաշտապ կերպով անշեղորեն անցկացնել կյանքում ապահովելով մասսայականացման գործը:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ՀԱՄԽ-ի 6-րդ պլենումի բանաձևը Հայկոոպի զեկուցման առթիվ)

ՀԱՄԽ-ի 6-րդ պլենումը լսելով Հայկոոպի զեկուցումը կոոպերատիվ աշխատանքների վերակառուցման մասին, արձանագրում է՝

Կոոպերատիվ աշխատանքների վերակառուցումը, համաձայն Համկոմկուսի Կենտկոմի, Ժողկոմխորհի և Ցենտրոսոյուզի մայիսի 12-ի նամակի, շնորհիվ Հայկոոպի, Հայմառժողկոմի, Զակսոյուզի ղանդաղկոտության և անշնորհք ղեկավարության, ընթացել է միանգամայն անբավարար, չտալով պահանջված գործնական արդյունքները:

Այս գործում նաև անբավարար մասնակցություն են հայտնաբերել պրոֆկազմակերպությունները, բավարար չափով չեն մասսայականացրել ու գլխավորել կոոպաշխատանքների վերակառուցման տնտեսական-քաղաքական նշանակությունը, շատ տեղերում ինքնահոսին թողնելով օպորտունիստական ինքնահոսի:

Սպառկոոպերացիայի վերակառուցման աշխատանքները կատարվել են ու շարունակվում են տեղի ունենալ բյուրոկրատիկ կարինետային ձևով, առանց բանվորական և աշխատավորական լայն մասսաների ակտիվ մասնակցության: Հայկոոպը և Զակսոյուզը վերակառուցման գործում չհայտնաբերեցին անհրաժեշտ ճկունություն և վճռականություն: Այդ կարևորագույն աշխատանքին թույլ չեղթերկյան տեմպեր հաղորդելու համար չկազմակերպվեց բանվորական լայն մասսաների ակտիվությունը՝ ուժեղացնելու բանվորական ամենօրյա կոնտրոլը սպառկոոպերացիայի աշխատանքների վրա:

Վորպես կենկրետ ձեռնարկումներ ՀԱՄԽ-ի պլենումն առաջարկում է՝

1. Առանձին ուշադրություն դարձնել կազմակերպված ինքնուրույն ճյուղային միավորումների աշխատանքների վրա, մտցնելով լրակատար պարզեցում ու հիմնովին ամրացնել նրանց աշխատանքների դրվածքը: Ստեղծել բոլոր նախադրյալները, վոր-

պեսզի ճյուղային միավորներն ամբողջապես ավարտեն իրենց կազմակերպչական բոլոր աշխատանքները վոչ ուշ, քան ողոստոսի 20-ը:

2. Անմիջապես ձեռք առնել ամենակտրուկ միջոցները՝ արմատական բեկում մտցնելու մասնագիտացած խանութների ընդարձակման բնագավառում՝ հրաժարվելով ունիվերսալ խանութների ձևից:

ա) Առաջարկել Հայկոոպին և Զակսոյուզի միավորներին վերացնել մարմինների կողմից տրված 63 առևտրական կետերը բացելու վոչ ուշ, քան ողոստոսի 30-ը: Խնդրել Ժողկոմխորհին առաջարկելու քաղխորհուրդներին տրամադրել բացվելիք խանութների և ճաշարանների համար համապատասխան շենքեր:

բ) Արձանագրել, վոր մինչև օրս պտղաբանջարեղենների ճյուղային միավորումը սահմանափակվել է մանրածախ խանութներ կազմակերպելով (Յերևանում 6, Լենինականում 6, Ղարաքիլիսայում 2, Ալլահվերդում 2), վորը միանգամայն անբավարար է. առաջարկել Հայկոոպին յերկու տասնօրյակի ընթացքում ընդարձակել աշխատանքները և ապահովել հիմնական բանվորական շրջանները և ավխոզները շրջանունդկոոպ միությունների և փակ բանկոոպների միջոցով:

գ) Բանվորների սպասարկումը պտղաբանջարեղեններով ապահովելու նպատակով, առաջարկել Մառժողկոմատին 3 ամսվա ընթացքում պարզություն մտցնել ստեղծել միանգամայն նորմալ փոխհարաբերություն մթերող կազմակերպությունների միջև, վորոշելով ամեն մեկի համար թե մթերման օբյեկտները և թե մթերման շրջանները:

դ) Նկատի ունենալով, վոր կաթնամթերքների ճյուղային միավորումը մինչև օրս ունի միայն 2 մասնագիտացրած խանութ, այն է՝ Յերևանում և Լենինականում, համարել այդ միանգամայն անբավարար և առաջարկել մեկ տասնօրյակի ընթացքում այդպիսիների թիվը Յերևանում հասցնել 4-ի, Լենինականում 3-ի, Ղարաքիլիսայում 1-ի, իսկ մնացած բանվորական վայրերում նույն ժամանակամիջոցում բանվորական սպասարկումը կաթնամթերքներով ապահովել շրջկոոպների և բանկոոպների միջոցով:

ե) Արձանագրել, վոր կուլտ ապրանքների ճյուղային միավորումը մինչև օրս մի շարք շրջաններում, ինչպիսիք են՝ Ղափան, Մեղրի, Շամշադին, Սիսյան և Դարալագյազ, դեռ չի ընդարձակել վերջնականապես կուլտ ապրանքների խանութները, վորպեսզի հանդամանքը անդրադառնում է վերակառուցման ընդհանուր աշ-

խատանքների վրա. առաջարկել մինչև ոգոստոսի 19-ը վերջնականապես ձևակերպել այդ կետերի ընդունումը և միաժամանակ անցնել նոր կետերի ու կիսակների ընդարձակման աշխատանքներին, գլխավորապես խոշոր գործարաններին և բանվորական թաղերին կից:

3. Ժողսնդի ավտոնոմ սեկցիան, չնայած կազմած պլանների, մինչև որս հիշված պլանների չնչին մասն է իրագործել. որինակ՝ բերքահավաքման ու հացամթերման կամպանիայի համար նախատեսված ճաշարանների ու թեյարանների ընդարձակման աշխատանքներն ընթանում են չափազանց դանդաղ և թույլ. «Զակուպիտ»-ի հետ նախատեսված սննդամթերքների մատակարարման ծրագիրը իրագործված է միայն 10 տոկոսով. առաջարկել ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել արմատական բեկում մտցնելու Ժողսնդի աշխատանքների մեջ, խնդրելով Անդրարհմխորհին առաջարկելու Զակոյուզին առաջադրած պլանները ժամանակին կատարելու համար լրիվ ապահովել բանվորության և ուսանողության ապասարկումը, բանալով նոր ճաշարաններ ու թեյարաններ: Առաջարկել Ժողսնդի ավտոնոմ սեկցիային ձմեռվա ամիսներին ճաշարանները կենսամթերքներով լրիվ ապահովելու նպատակով անմիջապես ձեռնարկել մթերքների հայթայթման գործը և ձեռք առնել բոլոր միջոցները մթերումների պլանը լրիվ կատարելու համար:

4. Հավանություն տալ Հայկոոպի վարչության վորոշման Յերևանի քաղաքամերձ տնտեսությունը տալու «Քաղաքամերձ տնտեսությունների միավորումին». առաջարկել բոլոր միջոցները ձեռք առնել քաղաքամերձ տնտեսությունների ընդարձակման և զարգացման համար, առաջին հերթին զարկ տալով բանջարաբուծական տնտեսություններին, այն հաշվով, վոր 1932 թ. հիմնական բանվորական ռայոնները ապահովվեն բանջարեղենով:

Արձանագրել, վոր Հողժողկոմատի կողմից տեղիք է տրվել մեծ ձգձգումների քաղաքամերձ տնտեսություններին պահանջված քանակությամբ հողամասեր տրամադրելու գործում, վորը խոշոր չափով անդրադարձել է տնտեսությունների պլանային աշխատանքների վրա. խնդրել Ժողկոմխորհին առաջարկելու Հողժողկոմատին ապահովելու Հայկոոպի կողմից 1932 թ. պահանջվելիք հողամասերը մերձքաղաքային տնտեսության համար: Առաջարկել Հայկոոպին մինչև սեպտեմբերի 1-ը ներկայացնելու ՀԱՄԽ-ի նախագահությանն ի քննություն 1932 թ. կոնտրոլ թվերը:

կենտվարչություններին՝ մասսայականացնել և կազմել հանգիպական պլաններ:

5. Խնդրել Անդրարհմխորհին առաջարկելու Զակոյուզին մին չեվ ոգոստոսի 20-ը կազմակերպելու նախատեսված քանակով մասնագիտացրած խանութներ:

6. Առաջարկել Հայկոոպի բոլոր միավորներին վոչ ուշ, քան ոգոստոսի 18-ը կիրառել տնտեսահաշվարկային ձևը բոլոր կոոպերատիվ ինքնուրույն միավորներում, առանձին խանութներում և ճաշարաններում:

7. Առաջարկել սպառկոոպերացիայի բոլոր միավորներին և կոոպառմիության կենտվարչության սկսել աշխատավարձի վճարման նոր սիստեմի անցնելու նշանակության լայն մասսայականացման աշխատանքները, այդպիսին ավարտելով մինչև ոգոստոսի 20-ը: Պարտավորեցնել կոոպ. բոլոր միավորներին, վորպեսզի նշված ժամկետին լրիվ և ամբողջապես մտցրված լինի աշխատավարձի վճարման նոր սիստեմը:

8. Կարևորագույն նշանակություն տալով խորհրդային տրնտեսությունում աշխատող բանվորությանը ժամանակին ու լրիվ ապրանքամթերքներով բավարարելու խնդրին, առաջարկել Հայկոոպին վճռական բեկում մտցնելու սովխոզների բան. սպասարկման աշխատանքներում, վորի համար պատասխանատու դարձնել Հայկոոպի վարչության անդամներից մեկին:

9. Արձանագրելով, վոր կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներն ընթանում են վոչ բավարար, առաջարկել Հայկոոպի վարչության ձեռք առնելու կտրուկ միջոցներ կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագիր ժամանակին լրիվ կենսագործելու համար:

10. Հանձնարարել ՀԱՄԽ-ի նախագահությանը և Աշխժողկոմատին՝ յելնելով Կուս. կենտկոմի վորոշումներից՝ հաշվի առնել այն կոոպաշխատողներին, վորոնք աշխատում են կոոպցանցից դուրս և այդպիսիներին ուղարկել կոոպցանցում աշխատելու.

Միաժամանակ հանձնարարել ՀԱՄԽ-ի նախագահությանը մինչև սեպտեմբերի 1-ը տալու մթերական 5 պատասխանատու աշխատակից:

11. Առաջարկել ՀԱՄԽ-ի բոլոր սեկտորներին, կենտվարչություններին և շրջպրոֆխորհուրդներին լայն կերպով մասսայականացնելու կոոպ. վերակառուցման խնդիրները և գործնականորեն մասնակցելու ու գլխավորելու վերակառուցման վողջ աշխատանքները:

12. Առաջարկել Հայկոոպին մինչև սեպտեմբերի 1-ը Ճերեվանում, Լենինականում, Ալլահվերդում և Զանգեզուրում կազմակերպելու մեկական դիետիկ ճաշարաններ:

13. Հայկոոպին՝ մինչև սեպտեմբերի 25-ը վերջնականապես ավարտել բացվելիք փակ բանվորական կոոպերատիվների աշխատանքները:

14. Հայկոոպին և Մատժողկոմատին՝ համապատասխան միջոցներ ձեռք առնել ժամանակին ապահովելու պահանջված քանակությամբ վառելանյութերը, լուրջ ուշադրություն դարձնելով տեղական միջոցներով ձեռք բերվելիք վառելանյութի մթերման աշխատանքներին:

15. Ուսանողության մատակարարման խնդիրները կանոնավորելու համար հանձնարարել ՀԱՄԽ-ի նախագահությանը և Սոցկենցաղային սեկտորին առանձնապես զբաղվելու այս խնդրով, ձեռք առնելով մի շարք կոնկրետ ձեռնարկումներ ուս. մատակարարման գործը կանոնավորելու համար:

ՑՈՒՑԱԿ

ՀԱՄԽ-Ի ՊԼԵՆՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ (ԼՐԱՑՎԱԾ 6-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ 1931 Թ. 10-Ց-ԻՆ)

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. ԳԱԼՈՅԱՆ ԱՂԱՍԻ
2. ԴԵՄԻՐՉՅԱՆ ՀՐԱՉՅԱ
3. ԽՈՋԱՄԻՐՅԱՆ ՑԵՐՎԱՆԴ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՊԵՏԻԿ
5. ԽԱՉԻԿՈՂԼՅԱՆ ՎԱՐՈՍ
6. ՎՅՈՒԴՈ
7. ՎՈՍԿԵՐՉՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ
8. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
9. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
10. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԴՈՒՇ
11. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՉԱՐՉԱՆԴ
12. ՄԱՅՍԿԻ ԱՇՈՏ
13. ՔՈՉԱՐ ԳԵՎՈՐԳ
14. ԱՂԱԲԵԿՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
15. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՑԵՐԵՄ
16. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅՐԻԿ
17. ՄԿՐՏՉՅԱՆ ԲԱԳՐԱՏ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

18. ԱՄԱՐՅԱՆ ՍԱՄՈՒԵԼ
19. ԲԱԲՈՅԱՆ ԱՇՈՏ
20. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
21. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
22. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՑԵՐՎԱՆԴ
23. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՏՈ
24. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂՈ

ՊԼԵՆՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐ

25. Գոդթումնի Գ., 26. Տանին Հակոբ, 27. Պողոսյան Գուրգեն, 28. Հովհաննիսյան Շ., 29. Շահինյան Սիրուշ, 30. Գեվորգյան Միսակ, 31. Ծովյան Կարապետ, 32. Գեվորգյան Մուշեղ, 33. Մըկրտչյան Պողոս, 34. Աբրահամյան Համո, 35. Մանանյան Արսեն, 36. Վաղարշյան Վ., 37. Սահակյան Գառնիկ, 38. Հակոբյան Լեվոն, 39. Մկրտչյան Հովհաննես, 40. Ամիրբեգյան Գեվորգ, 41. Հասանով Մահմուդ, 42. Հակոբյան Դավիթ, 43. Վարդանյան Կ.,

44· Գեվորգյան Թորգոմ, 45· Պետրոսյան Հայրո, 46· Այնաջյան Գրիշա, 47· Հակոբյան Արտավազդ, 48· Մարկոսյան Մանուկ, 49· Համբարյան Հմայակ, 50 Բաղդասարյան Բ·, 51· Հովհաննիսյան Բաղդասար, 52· Մահմեդով Մահրամ, 53· Ազնավուրյան Միհրան, 54· Մխիթարյան Սարգիս, 55· Սահակյան Գուրգեն, 56· Գեվորգյան գեվորգ, 57· Առաքելյան Յոլակ, 58· Մանասերյան վաղարշակ, 59· Մովսեսյան Աբգար, 60· Սահակյան Բագրատ, 61· Մկրտչյան Հարություն, 62· Ղարագյոզյան Դավիթ, 63· Իշխանյան Աշխեն, 64· Հայրապետյան Սիմոն, 65· Գեվորգյան Հրաչյա, 66· Վանեցյան Համբարձում, 67· Սարոյան Վազգեն, 68· Քոքանջյան Բագրատ, 69· Զոլախյան Գրիգոր, 70· Բունյաթյան Աստղիկ, 71· Մելիքյան Աղավնի, 72· Ավդալյան Սուրեն, 73· Բաղիլինա, 74· Միքայելյան Սերգո, 75· Զալախով Սարգիս, 76· Հաջիյեվ Իլիա. 77· Գեվորգյան Ներսես, 78· Մարինոսյան Գեվորգ, 79· Վարդանյան Սամսոն, 80· Աշխարհունի Ազատյան, 81· Միրիմանյան Սաթիկ, 82· Վանեցյան Խաչո, 83· Պոպովյան Գեվորգ:

ՍՈՑԱՊ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿԼԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

ԱՆԴԱՄՆԵՐ

1· Գեվորգյան Ավետիք, 2· Խարմանդարյան Լյուսյա, 3· Հովհաննիսյան Հարություն, 4· Մելիքսեթյան Զարգանդ, 5· Պողոսյան Գուրգեն, 6· Քոչարյան Ակիմ, 7· Մալյան Սերգեյ, 8· Իշխանյան Աշխեն, 9· Բաբոյան Աշոտ, 10· Զիլինգարյան Գամհար, 11· Հովհաննիսյան Բարեղամ, 12· կոնս· գործ· վնարմ· կայ· վարիչ, 13· Խզմալյան վաղարշակ:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

1· Կարապետյան Միխայել, 2· Գարասեֆիլյան Քինֆին, 3· Ռոստոմյան Մովսես:

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1· Բաղրամյան Գերասիմ, 2· Մուրադյան Հայրիկ, 3· Ավետիսյան Աղասի, 4· Բաբայան Հովհաննես, 5· Աղասյան Խաչեն: